ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/15, 31.01.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով ընթացակարգը 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու33/7
2) Պատվիրատուի անվանումը՝
<<Գյումրու ծննդատուն>> ՓԲԸ
3) Հասցե՝ ք. Գյումրի, Կոշտոյան 3
0881134101 Սեք

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱՅ
ՄՏՈՒ N 3556-19
«31» 01 2019թ.

3)Էլեկտրոնային աճուրդի ծածկագիրը՝ «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1»
և առարկան՝ <<Դեղորայքի ձեռքբերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Գյումրու ծննդատուն>> ՓԲԸ -ն <<Դեղորայքի>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել՝ «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թ. հունվարի 24-ի թիվ 3 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի հրավերի թիվ 49-րդ, 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի հականեխիչ (անտիսեպտիկ) - ախտահանիչ միջոցներ (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-2):

Հրավերի Հավելված թիվ 4՝ <<ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>>-ի Հավելված թիվ 1՝ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>>-ում հրավերում առկա՝ թիվ 50-րդ, 51-րդ և 52-րդ ապրանքների համար <<տեխնիկական բնութագիր>> սյունակներում գրված են ֆրանսիական <<Անիոս>> ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցների բրենդային՝ <<Հեբանիոզ>>, <<Ատերանիոզ>> և <<Անիոսժել 85 ՆՊՍ>> անվանումները (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1 – 2, արված նշումները):

Այդ սյունակներում գրված անվանումները հղում են պարունակում կոնկրետ ֆիրմային անվանմանը և արտադրողին, սակայն ոչ այդ սյունակներում և ոչ էլ որևէ այլ տեղ չի պահպանվել նման դեպքերում <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ << 5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:>> , ոչ մի տեղ առկա չեն «կամ համարժեք» բառերը:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Գյումրու ծննդատուն>> ՓԲԸ-ի կողմից՝ «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով ծածկագրովէլեկտրոնային աճուրդի մասին հայտարարությունը և՝ «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով ծածկագրովէլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2019թ. հուվարի 24-ի թիվ 3 որոշմամբ հաստատված՝ <<Դեղորայքի>> ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերը՝ թիվ 50-րդ, 51-րդ և 52-

ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում՝ հրավերի թիվ 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ <<Գյումրու ծննդատուն>> ՓԲԸ-ի կողմից՝ «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը՝ թիվ 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով, հակասում է <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 5 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

31 հուվարի 2019թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45